

Հունիսը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 հունիս

1915 Ընդունվեց Կարախիսարի խիզախ հինգնապաշտպանությունը:

3 հունիս

1837 Աշտարակում ծնվեց ականավոր վիպասան Պերճ Պերճյանը: (Վախճ. 1907թ.-ին):

1921 Հայկական ցեղասպանության հիմնական ուժերը որոնելիս մեկի թաղաք Փաշային տապալող Սողոմոն Թեհլիրյանի դատը Բեռլինում: Սողոմոն Թեհլիրյանը ազատ արձակվեց:

4 հունիս

1100 Ծնվեց հայ բանաստեղծ, մատենագիր Ներսես Ծնորհալին: (Վախճ. 1173թ.-ին):

1878 Անգլիայի և Թուրքիայի միջև կնքվեց մի պաշտպանողական դաշնագիր, որը նպատակ ուներ ապահովելու Թուրքիայի գրաված հողերը Ասիայում, և որի համաձայն Կիպրոս կղզին անցնելու էր Անգլիայի տիրապետության տակ:

1909 Կ. Պոլսում պատրիարք ընտրվեց Եղիշե արք. Դուրյանը:

1918 Բաթումում Թուրքիայի և Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունների միջև կնքվում է պայմանագիր, որով Թուրքիան զավթում է Հայաստանի մեծ մասը:

5 հունիս

1921 Ստալինի միջամտության շնորհիվ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը անջատվեց Հայաստանից և բռնակցվեց Ադրբեջանին:

6 հունիս

1869 Գևորգ Դ.- ի ձեռքով հիմնադրվեց Գևորգյան ճեմարանի շենքը:

1903 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Արամ Խաչատուրյանը: (Վախճ. 1978թ.-ին):

9 հունիս

1849 Կազմվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի ու Օրդուբադի գավառները:

10 հունիս

1858 Պարսկաստանի Շիրազ քաղաքում վախճանվեց գրող Մեսրոպ Թադևոսյանը: (Ծնվ. 1803թ.-ին, Ձորագ յուղում, Երևանի գավառ):

11 հունիս

1942 Մահացավ հայագետ, հնագետ և պատմաբան պրոֆեսոր Ալխարհաբեկ Քալանթարը (Լորիս Քալանթար):

12 հունիս

1200 Ծնվեց հայ ականավոր առակաբան-քարոզիչ Վարդան Այգեկցին:

1921 Խորհրդային Հայաստանը, հիմք ընդունելով Արցախի բնակչության բազմիցս արտահայտած ցանկությունը, հայտարարում է, որ Արցախն իր տարածքի անբաժան մասն է կազմում:

1957 Ծնվեց ԼԴՀ Մարտունու շրջանի ճակատի հրամանատար Մոնթե Մելքոնյանը: (Վախճ. 1993թ.-ին):

13 հունիս

1878 Բեռլինի դաշնագրի կնքումը: Ի տարբերություն Սան-Ստեֆանոյի պայմանագրի, չկան երաշխիքներ Արևմտյան Հայաստանում պայմանները բարելավելու համար: Թուրքիան բարեփոխումներ չնախաձեռնեց:

1921 Ստեղծվում են առաջին սովխոզները Հայաստանում:

14 հունիս

1722 Ծնվեց հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան (Վախճ. 1795թ.-ին):

1878 Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև:

15 հունիս

1915 Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում թուրքական կառավարությունը կախաղան բարձրացրեց հնչական կուսակցության 21 ղեկավարներին:

1988 Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը վավերացրեց 1988 ՕԶ 20-ի խնդրագիրը Լեռնային Ղարաբաղի հինգնավար մարզը Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ և հայցեց Խորհրդային կառավարությանը այս խնդրի առնչությամբ դրական վճիռ կայացնել:

16 հունիս

1895 Սկսվեցին Վանի առաջին դեպքերը - հինգնապաշտպանությունը, որը տևեց մինչև հունիսի 20-ը:

1915 Դեսպան Մորգենթաուն Միացյալ Նահանգների դեսպարտամենտին պարզորեն նկարագրել է Երիտթուրքերի քաղաքականությունը որպես «ցեղի բնաջնջման» արշավ: Միացյալ Նահանգների պետական քարտուղար Ռոբերտ Լենսինգը տեղեկացրեց նրան, որ «դեսպարտամենտը ընդունել է իր գործընթացը, այն է՝ կանգնեցնել հայկական հալածումը»:

17 հունիս

1500 Ծնվեց քանդակագործը հայ վարպետ Քիրան Կազմողը:

1887 Շուշիում ծնվեց նշանավոր կուսակցական հասարակական-քաղաքական գործիչ, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: (Վախճ. 1972թ.-ին):

1929 Ծնվեց աշխարհի շախմատի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը:

1971 Խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից սպանվեց հայ բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ Պարույր Սևակը: (Ծնվ. 1924թ.-ին):

18 հունիս

1941 Նախատական Գերմանիան և Թուրքիան կնքեցին բարեկամության պայմանագիր:

1987 Եվրոպական խորհրդարանը քվեարկությամբ ճանաչեց հայերի ցեղասպանությունը և Թուրքիային առաջարկեց ճգնաժամից դուրս գալու ուղիներ:

19 հունիս

1861 Ծնվեց նորվեգացի նշանավոր ճանապարհորդ և քաղաքական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենը: Նա վախճանվեց 1930թ.-ին թուրք ուղևորների կողմից հարուցած հայկական ցեղասպանությունից փրկված անթիվ մարդկանց օգնելուց հետո: Նա ստեղծեց «Նանսենի անձնագիր» այն փախստականների համար, ովքեր ռվոնեին պետության պատկանելության որևէ փաստաթուղթ:

2001 Վախճանվեց արձանագործ, նկարիչ և մանկավարժ Սարգիս Բաղդասարյանը: Նրա «Մենք ենք մեր սարերը» - «Ղարաբաղցիներ» հուշարձան կոթողը (1967) արցախյան ազատագրական շարժման և նոր պետականության խորհրդանիշը դարձավ: (Ծնվ. 1923)

20 հունիս

1911 Թիֆլիսում վախճանվեց նշանավոր մանկավարժ, գրող, հրապարակախոս Ղազարոս Աղայանը: (Ծնվ. 1840 թ.-ին):

21 հունիս

1952 Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանցի հանգիստը:

23 հունիս

1956 Մահացավ անգլիացի գրող Մայքլ Արլենը (Տիգրան Գույունջյան):

24 հունիս

1908 Ծնվեց Արտեմ Ալիխանյանը, գիտնական-ֆիզիկոս: (Վախճ. 1978 թ.-ին):

1998 Լիբանանում իր մահկանացուն կնքեց Հայ Դատի անխոջ պաշտպան, արաբ իրավաբան Մուսա Փրեմսը: Նա հայտնի էր հայերի ցեղասպանության նվիրված իր բազմաթիվ ուսումնասիրություններով:

25 հունիս

1964 Երևանում հիմնադրվում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:

26 հունիս

1861 Կ. Պոլսում ծնվեց ականավոր գրող և քաղաքական գործիչ Գրիգ որ Զոհրապը (թուրք ջարդարարների կողմից սպանվեց 1915 թ. հուլիսի 7-ին):

29 հունիս

1825 Թիֆլիսում ծնվեց դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը: (Վախճ. 1912թ.-ին):

1889 Ծնվեց գրող, արձակագիր, կինոդրամատուրգ Աբել Բակունցը: (Վախճ. 1937թ.-ին):

1999 Վախճանվեց Ամենայն հայոց 131-րդ հայրապետը՝ կաթողիկոս Գարեգ ին Ա-ն (ավագանի անվամբ՝ Նշան Սարգսյան): (Ծնվ. 1932թ.-ին Սիրիայի Քեսապ գյուղում):

30 հունիս

1862 Ձեյթունի առաջին ապստամբությունը:

Լուրեր

Իրանահայ համայնք

- «Դիե»ի հարցը կը քննարկի «Մաջման քաշխիս»-ը Կրոնական փոքրամասնությունների «դիե»ի (արյան գին) օրինագիծը, որ մերժվել էր Իրանի Իսլամական Հանրապետության Պահապան խորհրդի կողմից, խորհրդարանի կողմից հղվել է «Մաջման քաշխիս»ին (Վարչակարգի հայեցողության ճշտորոշող ժողով) վերջնական լուծում տրվելու համար:

- ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՐՔԻԹՅԱՆ ՏԻՏՐՈՍ ՇՆՈՐՀԵՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆ ՀԻՆԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՐԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետական հատուկ կոնդակներով արքութեան պատիւ եւ տիտղոս շնորհեց թեմական ծառայության մեջ գտնվող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբանության անդամ հետեւյալ եպիսկոպոսներին.- Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպս. Օհանյան, Գերաշնորհ Տ. Վարուժան եպս. Հերկեւյան, Գերաշնորհ Տ. Խաժակ եպս. Հակոբյան, Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Սարգսյան, Գերաշնորհ Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյան:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

- Տեղի ունեցավ Թեհրանի հայոց թեմի թանգարանի հիմնօրհնէքի արարողությունը

Ս. Աստվածածին եկեղեցուն կից «Վաչե Հովվեփյան» մշակութային համալիրում տեղի ունեցավ Թեհրանի հայոց թեմի թանգարանի հիմնօրհնէքի արարողությունը:



Իրան

- Ամերիկա-իրանական հարաբերությունները չեն ազդի Բուշերի ատոմակայանի կառուցման գործում Ռուսաստանի եւ Իրանի համագործակցության վրա

ՍՈՍԿՎԱ, 27 ՄԱՅԻՍԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՌԴ ատոմային էներգիայի նախարար Ալեքսանդր Ռումյանցեւը երկուշաբթի օրը Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավարի տեղակալ Ասադուլա Սաբուրիի հետ քննարկել է Բուշերում ատոմային էլեկտրակայանի առաջին բլոկի կառուցման աշխատանքների ժամանակացույցը: Այդ մասին ԻՏԱՌ-

ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել են ՌԴ ատոմային էներգիայի նախարարությունում:

Հանդիպման ավարտից հետո Ալեքսանդր Ռումյանցեւը հայտարարել է, որ ամերիկա-իրանական հարաբերությունները չեն ազդի այդ ատոմակայանի կառուցման գործում Ռուսաստանի եւ Իրանի համագործակցության վրա: Նա ասել է, որ «ռուսաստանյան կողմը առաջին հիմքեր չի տեսնում ատոմակայանի առաջին էներգաբլոկի շինարարության վերաբերյալ իր պարտավորությունների նկատմամբ դիրքորոշումը վերանայելու համար»: «Մենք կշարունակենք կատարել մեր պարտավորությունները, չնայած այն բանին, որ այդ հարցում պաշտոնական Վաշինգտոնի հետ մեր դիրքորոշումները չեն համընկնում», -նշել է ատոմային էներգիայի նախարարը:

Նա հայտնել է, որ «հունիսին նախատեսված է Իրանի փոխնախագահ եւ Ատոմային էներգիայի կազմակերպության նախագահ Գոլյան Ռեզա Աղազադեի այցը Մոսկվա: Այդ այցի ընթացքում կոնսուլտացիաներ կանցկացվեն միջուկային բարձր տեխնոլոգիաների բնագավառում եւ Բուշերի ատոմակայանի առաջին էներգաբլոկի կառուցման աշխատանքների ավարտման խնդրում Ռուսաստանի եւ Իրանի համագործակցության կացության շուրջ»:

Հայաստան

- ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՅՐԵՐԻ ԵՒ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱԴՊԱՆԱԿԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՈՆՆ Է

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի օրվա առթիվ

Հարգելի հայրենակիցներ, Ջերմորեն շնորհավորում եմ Հաղթանակի եւ խաղաղության տոնի կապակցությամբ: Երկրորդ աշխարհամարտի ավարտը մեծ իրադարձություն էր ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ մեր ժողովրդի կյանքում: Այն ամրագրվեց սերունդների հիշողության մեջ, որպես Հայրենական պատերազմի հաղթանակ ավարտ եւ նշանավորեց խաղաղ ու ստեղծարար աշխատանքի նոր սկիզբ: Մեր ժողովրդի հարյուր հազարավոր զավակներ, հատկապես՝ խորհրդային բանակի շարքերում, իրենց հերոսական պայքարով մոտեցրին Հաղթանակի ու խաղաղության օրը: Այն Հայաստանի համար բացեց տնտեսական ու մշակութային զարգացման նոր հորիզոններ: Մեր ժողովուրդն այդ պատերազմում փառքով պսակեց իր անունը:

Իրենց նախորդների արժանավոր ժառանգները Շուշիի ազատագրմամբ մայիսի 9-ին հաղորդեցին նոր իմաստ: Այն դարձավ արցախահայության վճռականության, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ազատ ու խաղաղ հեռանկարի խորհրդանիշ: Մայիսի 9-ը պապերի, հայրերի եւ որդիների պատմական հաղթանակների միասնական տոնն է, ինչպես նաեւ հայրենիքի խաղաղ վերածննդի գրավականը:

Շնորհավոր ձեր տոնը, սիրելի վետերաններ: Շնորհավոր բոլորիս տոնը: Մաղթում եմ քաջառողջություն, խաղաղություն եւ ամենայն բարիք:

- Մայիսի 26-ի կեսգիշերին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պաշտոնապես ամփոփել է հանրապետության բոլոր 1885 ընտրատեղամասերից ստացված նախնական արդյունքները

Հայաստանի (23,48%)	Հանրապետական	կուսակցություն՝
[278029]		
«Արդարություն» դաշինք՝ (13,58%)		

[160796]	ՀՀ Դաշնակցություն՝ (11,16%)
[135096]	«Օրինաց երկիր»՝ (12,33%):
[146035]	«Ազգային միաբանություն»՝ (8,78%)
[103938]	«Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցություն՝ (4,55%)
[53909]	Միավորված աշխատանքային կուսակցություն՝ (5,73%)
[67863]	Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցություն՝ (2,88%)
[34192]	«Հզոր հայրենիք»՝ (3,31%)
[39252]	«Արժանապատվություն, ժողովրդավարություն, հայրենիք»՝ (2,8 %)
[33223]	«Արդյունաբերողների և կանանց միություն»՝ (2,04%)
[24180]	Հայաստանի կոմունիստական կուսակցություն՝ (2,05%)
[24274]	Ժողովրդական կուսակցություն՝ (1,11%)
[13147]	Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական միություն՝ (0,67%)
[7949]	«Ազատական» դաշինք՝ (0,8%)
[9573]	

• Սեպտեմբերի 22-23-ը Երեւանում կանցկացվի Հայաստան-Սփյուռք համահայկական առաջին գործարար համաժողովը

Երեւան, 23 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ : Հայաստան-Սփյուռք երկրորդ համաժողովի շրջանակներում այս տարվա սեպտեմբերի 22-23-ը Երեւանում կանցկացվի համահայկական առաջին տնտեսական համաժողովը: Համաժողովի նախապատրաստական աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով, ՀՀ վարչապետի որոշմամբ, ստեղծվել է միջգերատեսչական կազմակերպական հանձնաժողով՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կարեն Ծշմարիտյանի նախագահությամբ: Ըստ Կ.Ծշմարիտյանի, համաժողովը կարելու է Հայաստան ներդրումներ ներգրավելու և աշխարհասփյուռ հայ գործարարների միջև ակտիվ

շփումներ ու համագործակցություն ծավալելու ուղղությամբ: Այն հնարավորություն կտա Սփյուռքի գործարարներին ծանոթանալ ոչ միայն վերջին 3-4 տարիներին Հայաստանում իրականացված փոփոխություններին և ներդրումային մթնոլորտի բարելավման աստիճանին, այլև այն հեռանկարներին և գերակայություններին, որին ՀՀ նախագահը և կառավարությունը հետամուտ են կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար: Ի տարբերություն այլ համաժողովների, համահայկական տնտեսական համաժողովին մասնակցության համար սահմանված է խորհրդանշական գումար՝ մոտ 100 եվրո, որը կուղղվի կազմակերպական աշխատանքներին: Նախարարի խոսքերով, փորձ է արվելու պետությունից համաժողովի կազմակերպման և անցկացման համար գումար չծախսել, աջակցության համար հանձնաժողովը դիմել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին, հույս կա, որ կօգնեն նաև հայ գործարարները: Համաժողովի ընթացքում կկազմակերպվեն տեղական արտադրանքի ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ, որպեսզի, նախարարի խոսքերով, Սփյուռքի մեր հայրենակիցները ոչ միայն մասնագիտական, այլև հոգեւոր առումով իրենց հայրենիքում

Ըստ Կ. Ծշմարիտյանի, հիմնական շեշտադրումն արվելու է գիտատեխնիկական և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման ուղղությունների վրա: «Մենք նախանշելու ենք այն ոլորտները, որտեղ Սփյուռքի գործարարները կարող են շահույթ ստանալ և ընդլայնել իրենց գործունեությունը», -նշեց նախարարը:

Նախատեսվում է հրավեր ուղարկել 1000-ից ավելի գործարարների, 1-2 ամսից պարզ կլինի, թե ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցելու: Նախարարը հույս հայտնեց, որ Սփյուռքի գործարարների մասնակցությունն ակտիվ կլինի, քանի որ հայ-ռուսական վերջին համաժողովը մեկ անգամ եւս փաստեց, որ Հայաստանի նկատմամբ տարեցտարի ավելանում է հետաքրքրությունը:

Այսօր միջգերատեսչական կազմակերպական հանձնաժողովի անդրանիկ նիստով սկիզբ դրվեց Հայաստան-Սփյուռք համահայկական գործարար համաժողովի նախապատրաստական աշխատանքներին: Նիստում կքննարկվեն համաժողովի անցկացման օրակարգի և կազմակերպվելիք միջոցառումների ժամանակացույցի նախագծերը, գործարարներին ուղարկվելիք նամակ-հրավերի ձևը, ինչպես նաև համաժողովի ինտերնետային էջի ստեղծման վերաբերյալ հարցեր:

• ԱՐԱ ԱՐԱՎՅԱՄՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՅՈՒՆԵՍԿՕՒԻ ԵՒ ՄԱԿԻ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՄՊՍ» ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵԼԸ

ՓԱՐԻՉ, 30 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Ռուսաստանի հայտնի հասարակականքաղաքական գործիչ Արա Աբրահամյանին շնորհվել է ՅՈՒՆԵՍԿՕՒԻ և ՄԱԿԻ «Խաղաղության դեսպան» բարձրագույն պարգևը: Այդ մասին հինգշաբթի օրը հայտարարվել է Փարիզում, որտեղ գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕՒԻ կենտրոնակայանը:

Ռուսաստանի պատմության մեջ միայն երկու գործիչների է (ներառյալ Մատիսլավ Ռոստրոպովիչը) շնորհվել «Խաղաղության դեսպան» կոչումը: Ինչպես ԻՏԱՌՆՏԱՍՍԵԿԻ հայտարարել է ՅՈՒՆԵՍԿՕՒԻ գլխավոր տնօրենի ներկայացուցիչը, պարգևն Արա Աբրահամյանին շնորհվել է «քաղաքակրթությունների երկխոսության մեջ հսկայական ավանդի, խաղաղության իդեալների պաշտպանությանն ու միջթեմիկական հարաբերությունների ամրապնդմանն աջակցելու համար»:

«Խաղաղության դեսպանը» օժտված է հատուկ միջազգային կարգավիճակով և կատարում է ՅՈՒՆԵՍԿՕՒԻ և ՄԱԿԻ կարելու առաքելություններ:

• «ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԴԱՎԱՃԱՆՎԱԾԸ» ՖԻԼՄԻ ՌԵԺԻՍՈՐԸ՝ ՍՊԱՆՎԱԾ

Լոնդոնից՝ Արա Սարաֆյանից երեկ ստացված լուրը գուժում է՝ մահը Տեյնա Միլլերի, որ Հայոց ցեղասպանության մասին «Հայաստան՝ դավաճանվածը» ("Armenia: The Betrayed") փաստագրական ֆիլմի ռեժիսորն է: Ֆիլմն այս տարվա փետրվարին հեռասփռվեց BBC հեռուստատեսությամբ: Ընդամենը 34 տարեկան Ջ. Միլլերը, ըստ տեղեկությունների, սպանվել է իսրայելական բանակի կողմից Ռաֆահուն (Գազայի հատված) ֆիլմ նկարահանելիս: Նա հայտնի անուն էր փաստագրական-լրագրողական ֆիլմերի ասպարեզում:

Առ այսօր նա շնորհավորական բազմաթիվ նամակներ էր ստանում հայոց ցեղասպանությանը նվիրված ֆիլմի համար: Նրա գործընկերոջ Ֆերգալ Քինի համաձայն, մոտակա օրերին նրանք Բեյրութ պետք է մեկնեին պատվավոր մեղալներ ստանալու:

• «ԱԶՏԱԳՐԵԼՈՎ ՇՈՒՇԻՆ ՄԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ ԷՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԸ»

Հայտարարում է Կոմանդոսը
ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, դարձավ այն պահը, որից հայկական բանակը սկսեց հաղթական երթը, ազատագրելով վաղմուշակա հայկական հողերը: «Այդ ժամանակից անցել է 11 տարի: Մենք հաղթանակի էստաֆետն ընդունել ենք մեր հայրերից՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներից, մենք հաղթեցինք, եւ ես վստահ եմ, որ եթե հարկ լինի, ապա մեր երեխաները կընդունեն մեզնից էստաֆետը եւ հաղթանակ կտանեն ցանկացած թշնամու հանդեպ», հայտարարեց գեներալ-մայոր Արկադի Տերևթաղետյանը (Կոմանդոս), որը 1990-1994 թթ. դարաբաղյան պատերազմի ժամանակ գլխավորում էր Շուշի քաղաքի ազատագրման ռազմական օպերացիան:

Ղարաբաղյան մարտերի մասնակիցները տոնի նախօրեին հանդիպեցին դպրոցականների եւ ուսանողների հետ Ալեքսանդր Թամանյանի թանգարանում, որի տնօրենը մեծ ճարտարապետի թոռ, ֆիզիկոս Ալեքսանդր Թամանյանը, պատերազմի ժամանակ կազմակերպել էր գլխավորել է մահապարտների Մեղրկատը:

Հանդիպման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին պատերազմում զոհվածների հիշատակը: «Հիշենք նրանց, ովքեր զոհվել են, եւ մեր տուրքը մատուցենք նրանց, ովքեր ողջ են մնացել», հայտարարեց Թամանյանը: Նա հիշեցրեց, որ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Հայաստանը, «որ սովորել էր, որ հարեւանները միշտ իրենից կտորներ են պոկում», առաջին անգամ սկսեց վերականգնել իր պատմական կարգավիճակը:

Արկադի Տերևթաղետյանը հիշեցրեց, որ 1992 թ. Շուշիի գրավումը դարձել էր գլխավոր ռազմավարական խնդիրը: Շուշիից «Գրադ» կայանից փետրվարի 13-ից մինչեւ մայիսի 8-ը ամեն օր զնդակոծվում էր Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտը: Մինչեւ Շուշիի գրավման օրը Ստեփանակերտի 70%-ըր ոչնչացված էր: «Յուրաքանչյուր հայ սիրում է Շուշին, բայց այդ քաղաքից մահ էր տարածվում, եւ մեր խնդիրը եղավ Շուշիի ազատագրումը», ասաց Կոմանդոսը: Նա հիշեցրեց, որ հակառակորդի զորքերի թվաքանակը Շուշիում կազմում էր 2500 մարդ: Ռազմական մարտավարության բոլոր օրենքներով, հարձակվող բանակը նման պայմաններում պետք է գերազանցի հակառակորդի թվաքանակը առնվազն երեք անգամ: Իսկ մեր մարտիկների թիվն ընդամենը 2800 էր», նշեց նա:

Շուշիի ֆենոմենը, նրա կարծիքով, այն է, որ ամեն ոք գիտեր, որ ազատագրում է իր հողը: «Ժողովրդի ոգին ահա թե ինչն էր բազմապատկում մեր ուժերը ճիշտ այն չափով, որքան հարկավոր էր հաղթանակի համար», և

ընդգծեց Կոմանդոսը, նշելով, որ Շուշիի ազատագրումը պատահականությունն էր, այլ օրինաչափություն: «Ես մինչ օրս զգում եմ եւ վստահ եմ, որ ազատագրելով Շուշին՝ մենք կատարում էինք ժողովրդի կամքը», հայտարարեց նա:

Այս հոգեկան ակունքը բխում էր միասնական ազգային պոթենցիալից, որի մեջ միավորվեցին բոլոր կուսակցությունները, ներառյալ եւ Սփյուռքը: Թիկունքը դրանում վիթխարի դեր խաղաց: Հայաստանի գիտնականները ձեռնամուխ եղան գենքի ստեղծման, որը չէր բավականացնում պատերազմի առաջին տարիներին:

Բացի տարատեսակ գենք պատրաստելուց, պետք էր նաեւ սովորեցնել մարտիկներին այդ տեխնիկան գործադրել: Մարտական գործողություններին մասնակցելուց բացի, Ալեքսանդր Թամանյանի մահապարտների Մեղրկատը զբաղվում էր մարտիկների ուսուցմամբ: Արկադի Տերևթաղետյանը հիշեց, թե ինչպես առաջին անգամ հայ մասնագետները 1991 թ. զինվորական հրամանատարությանը ներկայացրին իրենց ստեղծած տարատեսակ գենքերը, իսկ հետո Մեղրկատը դրանք փորձարկում էր մարտերում: Հանդիպման մասնակիցները ծափերով ողջունեցին ջոկատի մարտիկ Գագիկ Գինոսյանին, որը հակառակորդի երկու տանկ էր խփել հակատանկային «Ֆագոտ» գենքից:

Ամենաթանկը, ընդգծեց Տերևթաղետյանը, այն է, որ «մենք հիմա չենք վախենում ոչ մի ոսոխից, մենք վստահ ենք մեր ուժերին»: «Մեզ բոլորիս մաղթում եմ ապրել խաղաղ հողի վրա՝ այն զգացումով, որ մենք ունենք պետություն եւ ուժեղ բանակ», ասաց Կոմանդոսը:

Էայոց Սփյուռք

• ՀՊՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐՅԱՆԸ՝ ԱՄՆ ԱՐԵՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Մայիսի 3-ը ՅՈՒՆԵՍԿՈՒ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ թեմական տարեկան 76-րդ ժողովը, որի ընթացքում պատգամավորների մեծամասնության քվեով նոր թեմակալ առաջնորդ ընտրվեց Հայ եկեղեցու Կանոնադրի առաջնորդ գերշ. Ս. Հովհանն արք. Տերտերյանը: Իբրեւ Արեւմտյան թեմի 8-րդ թեմակալ առաջնորդ Հովհանն Սրբազանը հաջորդում է գերշ. Ս. Վաչե արք. Հովսեփյանին, որն իր 32-ամյա նվիրյալ ծառայությունից հետո կոչվել է հանգստի:

Մայիսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Ս. ԳարեգինԲ Ամենայն հայոց կաթողիկոսը հայրապետական գրով օրհնել է պաշտոնապես հաստատել է նոր թեմակալ առաջնորդի ընտրությունը:

Մայիսի 11-ին, Փասադենայի Ար. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում գերշ. Ս. Հովհանն արք. Տերտերյանը կմատուցի առաջին Պատարագը՝ որպես թեմակալ առաջնորդ:

Սիջազգային

• ՀՀ ԱԳՆ-Ի ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳՅՈՒԼԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հարց: Ըստ թուրքական լրատվամիջոցների հաղորդման, Թուրքիայի ԱԳ Նախարարը հայտարարել է, որ հարեւաններից խնդիրներ ունեն միայն Հայաստանի հետ, բայց պատրաստ են բարեկամանալու, եթե Հայաստանը պատրաստ է ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը եւ հրաժարվելու տարածքային պահանջներից: Ինչպիսի՞ն է ՀՀ ԱԳՆ-ն վերաբերմունքն այդ հայտարարությանը:

Պատասխան: Հայաստանը մշտապես կողմ է արտահայտվել առանց Նախապայմանների հարաբերությունների նորմալացմանը, որի շրջանակներում հնարավոր է քննարկել ամենատարբեր, այդ թվում՝ նաեւ՝ խիստ խնդրահարույց հարցեր:

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(3)

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՎԵՑ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քենալական թուրքիայի թիֆլիսի Զյուլպատոսարանի գինվորական կցորդ Նուրետտին բեյը ապրում էր Վելիամինովսկայա փողոցի թիվ 22 շենքում, իսկ նրա կողքի թիվ 20 շենքում տեղավորված էր խոտորջուրցի Պողոս Պողոսյանի կուռը:

Նուրետտին բեյի ընտանիքի ու Պողոսյանի միջև ստեղծվել էր բարիդրացական, այսպես ասած՝ համաշարիական փոխ-հարաբերություններ: Ամեն առավոտ Նուրետտին բեյը, կամ իր կինը հաց էին գնում Պողոսյանից եւ, որպես համաերկրացիներ, իրար քեֆ ու հալ հարցնում, նորություններ հաղորդում...

Պողոսյանը լինելով անգերազանցելի քաղաքավարի, հաճոյախոս ու հաճոյակատար հացավաճառ, հենց առաջին հանդիպումից գրավել էր Նուրետտին բեյի, մանավանդ նրա կնոջ համակրանքն ու վստահությունը: Պողոսյանը ամենայն պատրաստակամությամբ ընդառաջում էր նրանցառաջին պետքերին, տիկնոջ համար թավա կամ թիշուրմա էր թխում, նույնիսկ խորհուրդներով օգնում էր նրանց զանազան գնումներ անելիս...

Ջենալ փաշայի թիֆլիս ժամանելու երկրորդ օրը, Նուրետտին բեյի կինը հանապազօրյա հացը դնելիս, որպես նորություն հայտնում է, որ վսեմաշուք Ջենալ փաշան ժամանել է թիֆլիս եւ մի քանի օրից մեկնելու է Անգարա...

Լսելով Ջենալ փաշայի անունը՝ Պողոսյանը, ինչպես ասում է, լեզուն կծում է, սակայն առերես ոչինչ ցույց չի տալիս, իսկ երբ տիկինը հեռանում է՝ զոգմոցը մի կողմ ց մետում եւ դուրս գալիս փռից... Նա գնում է իր գիտցած մի քանի վստահելի ու հեղինակավոր հայրենակիցների մոտ, պատմում է իր լսած կարեւոր նորությունը: Վերջիններն էլ իրենց հերթին լուրը հաղորդում են էլի մի քանի վստահելի հայրենակցի, որով շուտով թիֆլիսաբնակ խոտորջուրցիների մեջ տարածվումիս է այն լուրը, որ իրենց տարադիր ընտանիքների բեկորները ոչնչացնող Ջենալ փաշան գտնվում է թիֆլիսում...

Արտաշես Գեւորգյանը, որ դոնբասաբնակ պանդուխտ խոտորջուրցիների հանձնարարությամբ գնում էր Զայաստան նոր գյուղ հիմնելու, Զուլիսի 13-ին հասել էր թիֆլիս եւ հյուր էր եղել Պուշկինսկայա փողոց թիվ 11, իր ազգական Գեւորգյանների փռում: Նույն տան բակում ապրում էր խոտորջուրցի Օզոս Սչանյանը, որը Արտաշեսի ժամանելու լուրն առնելու պես կանչում է իր բնակարանը եւ գաղտնաբար հայտնում Ջենալի թիֆլիսում գտնվելու մասին: Այդ լինում է Ջենալ փաշայի թիֆլիս գնալու երրորդ օրը: Պատրոս Տեր-Պողոսյանը նույն օրը իմանալով Արտաշեսի գալուստը շտապում է նրա մոտ: Զանդիպումը տեղի է ունենում Պուշկինյան պուրակում: Պետրոսը նույնպես նոր էր եկել Դոնբասից: Նա էլ իմացել էր Ջենալի թիֆլիսում լինելը: Դեռ հեռվից երկու երկու ընկերները դեմքի ուրախ արտահայտությամբ հասկացնում էին իրար ուրախառիթ նորությունը...

Ջերմագին ողջագուրվելով Արտաշեսը ասում է.
- Գազանը կարծես ջուխտ ոտքով ճիճեխն է ընկնում...
- Մի ասիլ,- ավելի պատեհ առիթ չէինք կարող սպասել...
Եվ երկու ընկերները, որոնք դեռ 1919 թվին Բաթումում Կառույ Զախալյանին հանդիպելուց հետո շարունակ մտորել էին մի օր Ջենալի հետ հաշվեհարդար կատարելու մասին, այժմ հաղթական տրամադրության մեջ էին...

Նրանք նստում են մի թափուր նստարանի վրա եւ ծրագրում՝ ինչպես գլուխ բերել Ջենալի սպանությունը: Թեթեւ ու մոտավոր ուրվագիծ կազմելուց հետո նրանք գնում են Կառույ Զախալյանի եղբոր՝ Գրիգորի մոտ, որը աշխատում էր Պողոսյանի փռում եւ ապրում էր վերոհիշյալ Նուրետտին բեյի ապրած տան մեջ համարյա միեւնույն բնակարանում: Գրիգորի եւ Նուրետտին բեյի ննջասենյակները իրարից բաժանվում էին մի թեթեւ պատով եւ ժամանակավորապես փակված դռով, այնպես որ, ականջելու դեպքում պարզ լսվում էր հարեւանների խոսակցությունը...

Արտաշեսն ու պետրոսը Գրիգորին հայտնում են բանի էությունը եւ խնդրում ուշի ուշով ականջել Նուրետտին բեյի, նրա կնոջ ու երիտասարդ եղբոր խոսակցությունները, ու ինչ որ կիմանա Ջենալի մասին անմիջապես հայտնի իրենց: Ինչ կասկած, որ Գրիգորը ամենայն պատրաստակամությամբ հանձն է առնում այդ պատվավոր ու կարեւոր հանձնարարությունը սրբությամբ կատարել ու ժամը ժամին հաղորդել իր ականջածն ու լսածը:

Հետեւյալ գիշերը Զացի Սեյրանում գտնվող սերոբ Դուլարյանի փռում տեղի է ունենում, ինչպես նրա մասնակիցները իր ժամանակին անվանել են այն՝ «խորհուրդ»...:

Այդ խորհրդին մասնակցել են խոտորջուրի գյուղերից. Խանդածորից՝ Սերոբ Գեւորգյանը, Կարապետ Վարդիկյանը, Կիրակոս Պոքայանը, Միջինթաղից՝ Պողոս Պողոսյանը, Տիգրան Թիփուխյանը, Արտաշես Գեւորգյանը, Ճիճապաղից՝ Օզոս Սչանյանը, Զանբարձուն Պալճյանը, Կրմտից՝ Մելքոն Քենալյանը, Սունինցից՝ Զարություն Զախալյանը, Քեղուտից՝ Վարդան Տեր-Զարությունյանը, եւ Սոխրակոյից՝ Ստեփան Ծաղիկյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը (Քիթապորդ):

Ահա այդ համեստ փռում, 1922 թ. Զուլիսի 14-ին Արեւմտահայ մահատակ ժողովրդի բեկորներից 13 հոգի խորհրդի նստելով, միաձայն մահվան են դատապարտում աշխարհի ամենամեծ ոճրագործներից մեկին, 20-րդ դարի առաջին ցեղասպանության հեղինակներից մեկին, հայ ժողովրդի գլխավոր դահիճներից՝ Ջենալ փաշին:

Նշանակելի է, որ առհասարակ չափազանց զգուշավոր այդ հացագործներից ոչ ոք չի խոսում գործի վտանգավորության մասին կամ զգուշության քարոզ չի կարդում... Ամենքը համակված են եղել մի վեհ գաղափարով՝ թեկուզ իրենց կյանքն ու բարեկեցությունը գոհեն, սնդակեն (խոտորջուրի բարբառով՝ սպանել վատին, գազանին) Ջենալ փաշին, վրիժառու լինեն իրենց մորթոտված ու տանջամահ արված հարազատների համար...

Այդ միահամուռ որոշումից հետո մի պահ տիրում է վեհ, հաղթական լռություն... Բոլորը, կարծես խոսքը մեկ արած, հայացքները ուղղում են Արտաշեսին ու Պետրոսին...

Պետրոսը վեր է կենում ու հայտնում, որ Արտաշեսն ու ինքը դեռ Բաթումում ուխտել էին Ջենալից վրիժառու լինել, եւ այժմ հանգամանքների բերումով հնարավորություն կա իրենց ուխտը կատարել, հետևաբար Ջենալի սպանության գործը իրենց վրա են վերցնում...

Արդեն ներկաների միտքն էլ այդ է եղել, նրանց հույսը Արտաշեսի ու Պետրոսի վրա է եղել... Այդպիսի վտանգավոր ու ռիսկով լի տեռորի համար դժվար է գտնել ավելի հարմար թեկնածու. երկուսն էլ անցել էին կռիվների բովից, թոժվել ու իրենց ցույց էին տվել, որպես ոչ միայն քաջ ու անվեհեր կռվողներ, այլեւ անգերազանցելի սնայպերներ, ինչ որ տեռորի գործում անգնահատելի առավելություն է...

Հենց այդ խորհրդում էլ որոշվում է, թե ներկաներից ով ինչպիսի պարտավորություն է ստանձնում, ինչպիսի մասնակցություն է ստանձնում, ինչպիսի մասնակցություննայիսի ունենա տեռորի կազմակերպման գործին:

Հետևաբար առավտովանից ամեն որ թողած իր անձնական գործերը, անցել էր իր ստանձնած վտանգավոր պարտականությունների անշեղ կատարման եւ, ի պատիվ նրանց, մանավանդ ծերերի, պիտի արձանագրել, որ ոչ մեկը չվախեցավ, չզղջաց, դասալիք չեղավ, չընկրկեց եւ ամենայն ոգեւորությամբ իր ուխտը կատարեց մինչեւ վերջին րոպե...

Հուլիսի 16-ից սկսվում է շատ լավ կազմակերպված բազմակողմանի հետախուզություն-հետապնդում Ջենալի ու նրա համհարզների վերաբերմամբ:

Ամեն օր երեք հոգի ի բուն աջալուրջ հսկում են Գանովակայա փողոցում (որտեղ թիվ 24 շենքում, տեղավորված էր թուրքիայի հյուպատոսարանը) եւ հարակից փողոցներում եւ Ջենալի կամ նրա համհարզների բոլոր տեղաշարժումների մասին անմիջապես կապավորների միջոցով տեղեկացնում էին Պուլիսիայի պուրակում հերթապահող մյուս ընկերներին: Իսկ երբ հետեւյալ անգամ տիկին Նուրետտինը որից գալիս է հաց գնելու, Պողոսյանը դիվանագիտորեն նրա «մաղը թափ է տալիս»՝ հարց ու փորձ է անում Ջենալի մասին: Նա պատճառ բռնելով, որ բուլշեւիկները իրենց նեղում են ու արգելակում են մասնավոր առետուրն ու ձեռներեցությունը (այդ մասին նա առաջուց էլ գանգատվել էր Նուրետտինի բեյի եւ միշտ էլ փոխհասկացության հանդիպել) հայտնում է, որ ինքը մտադրվել է մեծն փաշային դիմում ներկայացնել, որպեսզի իրեն, որպես հավատարիմ թուրքահպատակի, թույլատրի վերադառնալ Թուրքիա...

Տիկինը կատարյալ ըմբռնողությամբ ու կարեկցությամբ է վերաբերվում Պողոսյանի խնդրանքին եւ հավաստիացնում է, որ իր ամուսինը անպատճառ կմիջնորդի եւ կօժանդակի այդ մասին...

Այդ եւ հետագա գրույցների եւ հարցուփորձի հետեւանքով Պողոսյանին հաջողվում է որոշ տեղեկություններ իմանալ: Նրա հնարած՝ թուրքիա վերադառնալու իրավունք խնդրելու պատմությունը լավ պատրվակ է դառնում առանց կասկածի տեղիք տալու ամեն անգամ խոսք բաց անել Ջենալի մասին...

(Շար. 3)

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

(10)

(Շար. Նախորդ համարից)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅՑ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ XXդ. 30-ական թթ. պարսիկ լեզվաբանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայոց լեզվի, հատկապես գրաբարի նկատմամբ: Բանասեր Ռեզա-զադե Շահադը բարձր է գնահատել Միրզա Մեքրոմ-խանի, Ռ.Աբրահամյանի, Հ.Աճառյանի ծառայությունները պարսկերեն լեզվին եւ գրականության: Նա հատկապես շեշտել է, որ հայոց լեզվի բազմահնչյուն ալթուրենի շնորհիվ պահպանվել ու վերականգնվել են իրանական պատմական շատ վայրերի ու նաձանց անուններ: Հայտնի լեզվաբան Փ.Ն.Խանլարին գտնում է, որ պարսկերենին տիրապետելու համար անհրաժեշտ է քաջածանոթ լինել նաեւ հայերենին:

Պարսիկ գրականագետ ակադեմիկոս Ա.Նաֆիսին իր «նախախլամական Իրանի պատմության աղբյուրները եւ հայ պատմիչները» հոդվածում բարձր գնահատելով հայ պատմիչների, հատկապես Մովսես Խորենացու երկերը իբրեւ պատմության ճշգրիտ եւ հավաստի աղբյուրներ, դրանց պարսկ. թարգմանությունը համարել է իրանյական պահանջ: Հայ պատմագրության հետազոտությամբ են զբաղվել պատմաբան եւ հնագետ

Մ.Սոթաֆավին, Ա.Սեիրին (Շուշթարի): Վերջինս «Իսլամական Իրանը» մեծածավալ աշխատությունում լայնորեն օգտագործել է հայկական աղբյուրները: Անվանի պատմաբան-բանասեր Է.Փուր-Դավուդը նշում է, որ «Հունական հռոմեական աղբյուրներից ավելի մեծարժեք են հայկական աղբյուրները: Պետք է հնարավորին չափ օգտվել այդ աղբյուրներից եւ գրել Իրանի ժողովրդի պատմությունը»: 1950-ական թթ. էբրահիմ Դեհգանը պարսկ. է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» հատվածներ («ՕՖոդ») թերթը: 1981-ին լույս է տեսել «Հայ ժողովրդի Պատմություն»-ը երկու հատորներով:

Պարսկական միտքը բարձր է գնահատել նաեւ հայ գրարանության: Դեռեւս 1910-ին լույս է տեսել Ա.Ահարոնյանի (Արցունքի Հովիտը): Հետագայում թարգմանվել են նաեւ Շիրվանզադեի (Արտիստը 1945), Ռաֆֆու (Ուխտյալ միանձնուհի 1945, Ոսկի աքաղաղը 1968), Շանթի (Հին Աստվածներ1959), Գ.Ջոհրաբի (Պատմվածքներ1963), Վ.Թոթվենցի (Կյանքը իհն հռոմեական ճամբաների վրա 1964), Մ.Արմենի (Հեղնար աղբյուր 1965) եւ այլոց երկեր, պոեզիայից՝ Մ.Նալբանդյանի, Շ.Կուրդիյանյանի, Հ.Հակոբյանի, Գ.Սաթյանի, Ա.Իսահակյանի մի շարք գործեր տպագրվել են «Սաադաթ բաշար», «Աթաշ», «Մարդոմ», «Սոգանդ», «Սեթարեյե Սոբի» եւ այլ պարբերականներում: Դեռեւս 1922-ին դրամատուրգ-դերասան Ռ.Ք.Շահրազադը մի շարք հայ արվեստագետների հետ թարգմանել է Հ.Թումանյանի «Անուշ» պոեմը եւ բեմադրել: Ջերմորեն է ընդունվել Իսահակյանի «Աբու-լալա Մահարի» պոեմի թարգմանությունը (առանձին գրքով 1968): Թեհրանում 1969-ին Թումանյանի ծննդյան 100 ամյակի առիթով տպագրվել են նրա հատընտիրը «Ախթամար», «Փարվանա» լեզենդները «Անուշ», «Թմկաբերդի առունը» պոեմները եւ մի շարք բանաստեղծություններ ընդգրկվող մի հատոր Սպահանում հայ պոեզիայի ժող. «Անուշ» անվանումով: Ա.Խաչատրյանի պարսկ. թարգմանությամբ լույս է տեսել «Վշտի դուցազներգություն» (1963) խորագրով անթոլոգիան, որը ընդգրկում է Շիրազի «Բիրլիական» պոեմը եւ արեւելահայ ու արեւմտահայ բանաստեղծների երկեր, «Մայրականը հայ բանաստեղծության մեջ» (1972) ժող. եւ Պ.Սեւակի հատընտիրը՝ «Անլուելի գանգակատուն» (1978) Նարեկացու «Մատյան Ողբերգություն» (1986) «100 տարվա հայ պոեզիա» (1990) վերնագրով:

1960-ին իրանի Սոհամադ Ռեզա Շահ Փահլավու անմիջական թույլտվությամբ Սպահանի համալսարանին կից բացվել է հայագիտական ամբիոն: Այդ գործում կարեւոր նպաստ են բերել Սպահանի համալսարանի դեկան, դր.Ամիր Աբբաս Ֆարուդին եւ Թեհրանի պետական համալսարանի գերմաներեն լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Հովհաննես Հախնազարյանը:

1967-68 ուս. տարվա սկզբին Թեհրանի պետական համալսարանի գրական Ֆակուլտետին կից ստեղծվել է հայոց լեզվի եւ գրականության ամբիոն: Արդի հայերենի եւ գրաբարի դասավանդումը ստանձնել էր նույն Ֆակուլտետի երկարամյա դասախոս Հ.Հախնազարյանը:

1995 թ. Թեհրանի Իսլամական Ազատ համալսարանի արտասահմանական լեզուների ֆակուլտետում բացվել է հայոց լեզվի եւ գրականության ամբիոն:

(Շար. 10)

Հունիսի հայկական տոները

Համադրեց Էդ. Գերմանիկ

ՏՈՆ՝ ԿԱԹՈՂԻԿԵ ՄՐԲՈ ԷՋՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին Մայր Տաճարը հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնն է, կառուցվել է 303 թվականին: Ահա թե ինչպես են գնահատել մտավորականության ներկայացուցիչները Մայր Աթոռ Էջմիածին դերը հայ կյանքում:

«Հայոց Մայր Աթոռը՝ Էջմիածինը հայ ցար ու ցրիվ ազգի սրբազան դրոշակն է, ուխտի տապանակը, միության կապը:

Թեև ժամանակի ընթացքում տեղ-տեղ մաշված, թեև երբեմն վար ժամաված, բայց ցա մեր ազգային դրոշակն էլ, մեր կապը, մեր երբայրության ճշմանը, մեր ուղեցույցը, մեր ոգեբորության առարկան, որի մոտից անցնելիս օտար հզորն ու տկարը պատմական եւ գինվորական հարգանքի պատիվներ են տալիս հայ ազգին»:

Մայր Տաճարի տոնակատարությունը կատարվում է հիմք ընդունելով Ս.Գրիգոր Լուսավորչի տեսիլքը: Եկեղեցու կառուցման հետ կապված ավանդությունը մեզ է հասել շնորհիվ պատմիչ Ազաթանգեղոսի հայտնած տեղեկությունների: Ս.Գրիգոր Լուսավորչին տեսիլք է երևում, հանկարծ լսվում է մի սարսափելի որոտ եւ փոթորկոտ ծովի մռնչյուն: Լուսավորվում է երկինքը, որտեղից իջնում է լույսի առաջելից քայլող մի լուսադեմ պատկառելի ծերունի: Նրա հետ իջնում են նաեւ անթիվ անհամար զորքեր, սակայն այդ գինվորներն անմիջապես ցրվում են երկրի տարբեր վայրերը եւ, այդպիսով լցնում են ամբողջ աշխարհը: Իսկ երկնքից անսպառ հոսում էր լույսի հիասթափանչ հոսքը: Առաջապահ լուսադեմ ծերունին չէր հեռանում իր իջած վայրից, ինչպես մյուսները: Նա արծվի նման սլանում էր դեպի քաղաք, ձեռքին ուներ ոսկի ուռ, որով նա զարկում էր թանձր գետնին եւ նրա զարկած վայրերում լեռնոտ երկիրը վեր էր ածվում տափարակ ու ընդարձակ դաշտի: Քաղաքի արքունի ապարանքի մոտ, հսկա բլուրի վրա, սկսում է բարձրանալ ճախարակածե մի ոսկե խարիսխ, որի վրա դեպի երկինք էր հառնում հրեղեն սյունը՝ ծայրին ամպեղեն խոյակով, որի վրա փայլում էր լուսեղեն խաչը:

Ազաթանգեղոսը վերծանելով այդ տեսիլքը մշում է, որ ոսկե խարիսխը դա հետատուն էւ անշարժ վեմն է, հրեղեն սյունը՝ կաթողիկե եկեղեցին է, որը հավատացյալ բոլոր հոգիներին հավաքում է իր թեւերի տակ, ամպեղեն խոյակը արդարների ընդունարանն է, որոնք Տիրոջ գալուստին պետք է թռչեն ու ընդառաջ գան: Իսկ լուսավոր խաչը մեծ քահանայապետությունն է ժողովրդի շրջանում, մարմնացած օրինակը Աստվածորդու օձյալ քահանայության:

Այս տեսիլքից անմիջապես հետո, Ս.Գրիգոր Լուսավորչին ու Տրդատ թագավորը իրենց շքախմբերով Բագավանից գալիս են Վաղարշապատ, որը հայտնի էր, որպես հայոց մայրաքաղաք: Անմիջապես սկսվում են շինարարական աշխատանքները: Սանդուղիաների հեթանոսական մեխանը քանդելով, այդ տեղում կառուցում են հայոց Մայր Տաճարը, նվիրված Ս.Աստվածածնին:

Տարբեր ժամանակներում Վաղարշապատի Ս.Կաթողիկեն բազմիցս ենթարկվել է ասպատակության եւ ավերվել է: Առաջին անգամ եկեղեցին ավերվեց 380 թվականին ուրացող Մերուծան Արծրունու կողմից, երբ նա պարսից զորքերի առաջնորդությամբ մտավ Վաղարշապատ: Սակայն շուտով այն կրկին վերականգնվեց Վահան Մամիկոնյանի կողմից:

Տարիների ընթացքում բազում փորձությունների ենթարկվեց Էջմիածնի Մայր Տաճարը, սակայն ոտնձգություններից եւ հարձակումներից հետո էլ միշտ կանգուն մնաց եւ պահպանեց իր առաքելությունը, որպես հայ ժողովրդի հոգեւոր եւ ազգային միության կենտրոն:

Կաթողիկե Ս.Էջմիածնի տունը մայր աթոռի, նրա դարավոր կենտրոնի անվանակոչության, նրա անսասանության տունն է, որը հաստատված է 18-րդ դարում Հայրապետ Սիմեոն Երեւանցու կողմից:

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԱԿԱՆՂԱՐՅԱՆ, Գ. ՎԱՅՆՅԱՆ

66. Ահավոր են բոլոր ժողովուրդների պատմությունները: Բոլոր ժողովուրդներն էլ արբել են բացմաթիվ օրհասական պահեր: Շատերը, շատ-շատերը չեն դիմացել ճակատագրի հարվածներին:

Հայ ժողովուրդը դիմացել է:

67. Եթե տիեզերագնացները իրենց ճանապարհորդությունների ընթացքում հանդիպեն մի այնպիսի մուլորակի, որը նման լինի Հայաստանի հողին, լիակատար հիմք կունենան հայտարարելու, որը այդ մուլորակը հարմար չէ նորմալ կյանք վարելու համար:

Իսկ հայերը բերրի են դարձրել այն հողը, որը պիտանի չէ կյանքի համար:

Հող էր պետք, եւ նրանք ապագա դաշտերը մաքրեցին քարից: Յուրաքաչյուր հեկտարից յոթ հազար տոննա քար էին հավաքում: Տառաջիորեն մի կողմ էին հրում քարե լեռները, որպեսզի ազատված տեղը խաղողի այգի տնկեն:

68. Հայերը շինարար - ժողովուրդ են: Սրա հետ ո՞վ կվիճի: Բայց չինել ի՞նչ... դա՞շտ: Իսկ նրանք շինում են: Դաշտեր են շինում: Քարը հավաքում են, ջրանցքներ են անցկացնում, ցորեն են ցանում, խաղողի որթ են տնկում: Շչմելու բան է՝ քարի վրա հող փռել, սերմ ցանել, բերք ստանալ...

Մի՞թե կյանքում ամենայն լավը ահա այսպես՝ ջանք ու քրտինքով չի ձեռք բերվում: Չէ՞ որ այստեղ մի բաժակ կոնյակ ստանալու համար պետք է մի դույլ քրտինք թափես, եւ մազաղաթյա մի բարակ լավաշ թխելու համար պետք է հողը մաքրես հազար կտոր քարից...

69. Գլուխդ առ, փախիր այստեղից: Ուր էլ գնաս, այստեղից վատ չի լինի: Բայց ահա թե ինչ մարդիկ չեն փախչում: Գալիս են: Գալիս են ու գալիս...

70. Լեռը դեմ ունի՞: Առաջ այդ հարցին ես, երեւի, չիմանայի թե ինչ պատասխանեմ: Իսկ հիմա ասեմ եմ այդ, ունի: Այդ նրանից է, որ ես տեսա Արարատը: Նա միշտ էլ շրջված է դեպի Հայաստանը՝ իր գեղեցիկ ու վշտալի դեմքով: Արարատը հանգիստ ու լուռ կանգնած է երեւանի վրա, արողջ Հայաստանի վրա: Նույնիսկ երբ ամպերը ծածկում են ամբողջ երկինքը, միեւնոյն է, զգում էիր, որ նա կա, նա այստեղ է: Եվ գիտիր, որ Հայաստանի երկինքն էլ իր հերթին հավաքված է նրա ճերմակ գագաթի շուրջը: Երագանքի լեռ: Լեռ-խորհրդանիշ: Մայր-լեռ...

Մխիթար Գոշ (12-դ.)

26. Բուն եւ Արծիվը

Բուն միջնորդ ուղարկեց արծիվ մոտ եւ հարս խնդրեց նրա դստերը, ասելով:

-Դու ցերեկվա քաջամարտիկ ես, իսկ ես՝ գիշերվա, արժանի ենք խնամիության:

Բազում խնդրանքներից հետո արծիվը համաձայնեց տալ դստերը:

Հարսանիքն սկսեցին ցերեկով: Ոչինչ չէր կարողանում տեսնել փեսան, եւ հարսնաբավորները ծաղրում էին նրան: Երբ գիշեր եղավ, ոչինչ չտեսավ հարսը: Ծաղրուծանակն ավելացավ: Եւ այս պատճառով հարսանիքն իսկոյն խափանվեց:

27. Ճայր եւ Ասագ

Ճայր գնացել սագի մոտ, աղաչում էր, ասելով.

-Լինելով սեւադեմ, ես վատաբանվում եմ բոլորից, դու այդքան սպիտակ ու պայծառ ես, խնդրում եմ սովորեցնես ինձ սպիտականալ քեզ նման:

Կարեկցելով նրան, սագն ասաց.

-Ինձ նման միշտ լվացվիր ջրով:

Բայց լվացվելիս ընկնում էր ճայր սեւ փետուրը եւ դարձյալ նույն գույնով գալիս էր մեկ ուրիշը: Ու ճայր նորից աղաչեց, որ սովորեցնի: Սագն ասաց.

-Լվացվելուդ հետ մեկտեղ, պիտի սովորես իմ լեզուն, որ կարողանաս ինձ նման լինել:

Բայց ճայր հանձն չառավ մոռանալ սեփական լեզուն եւ մնաց նույնօրինակ սեւադեմը:

28. Արջը եւ Մրջյունը

Արջը փորում էր մրջյունի բույրը եւ լեզվով հավաքում նրանց ու ուտում: Մրջյունը նրան սպանելու հնարը գտավ: Գնալով պիծակի իշամեղվի, մժեղի, շնաճանճի, կրետի եւ սրանց նմանների մոտ, խնդրում է, որ իբրեւ ազգականներ, օգնեն իրեն: Սրանք կարեկցելով հարվածում են արջի աչքերին ու սկանջներին: Արջը քարին է խփում գլուխը, որը նեխում է, եւ որդեր են ծնվում մեջը: Ցավի սաստկութիւնից արջը, բերանը բանալով գոռում է: Իսկ միջատները, մտնելով փորը, ծակծկում են նրա աղիքները: Արջը նեղվելով, դիմում է հոտոլ ջրին եւ, չափից անելի սուզվելով մեջը, խեղդվում:

Առակիս իմաստն այն է, որ հզորները տկարները արհամարհում են եւ չեն վախենում նրանցից, բայց փորքերը ուժեղանում են իմաստությամբ եւ հաղթում հզորներին:

29. Ոսկին եւ Ցորենը

Թագավորելու ժամանակ ոսկի պահանջում էր, որ բոլոր նյութերը գան երկրպագեն իրեն: Նա իր անձը թագավոր էր կոչում, որովհետեւ թագավորի պատկեր կար վրան, ու դրանով գոռոզատուն էր արծաթագործների եւ ուրիշների վրա եւս:

Եւ բոլորն էկան, չեկավ միայն ցորենը, ասելով.

-Թող նախ ինքը գա ինձ երկրպագելու:

Առակա ցոյց է տալիս, որ բոլոր նյութերը միաժամանակ մեծարանքի չեն արժանանում: Սովի վտանգի պատճառով բոլորը խոնարհվում են ցորենի առջեւ:

30.Մարդը եւ Քալիանոսը

Մի անգամ Քալիանոսը բանախոսություն էր կարդում մարմնի առողջության մասին, ասելով.

-Եթե մարդ զգույշ լինի ուտելու եւ խմելու մեջ, մեր բժշկության կարիքը չի զգա:

Այս լսելով, մի մարդ ո՛չ ուտում է եւ ո՛չ խմում: Դրանից նա ծանր հիվանդանում է եւ թշնամանում Քալիանոսին: Իմանալով այդ, Քալիանոսն ասաց.

-Ո՛վ անմիտ մա՛րդ, չգիտե՞ս դու, որ մենք բնության տրարիչը չենք, այլ օգնականը: Ինչո՞ւ չհասկացար խոսքիս իմաստը, որ ճիշտ վարվեիր:

Այս օրինակից սովորում ենք, որ ուշադրությամբ պետք է լսել իմաստունների ու բժիշկների խոսքը եւ խուսափել ծայրահեղություններից՝ եւ առավելից, եւ նվազից, որովհետեւ երուկ դեպքում էլ չարիք կա:

ՐԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Բզի գլխին բռունցքով չեն խփի:
- Բոյին եմ նայում՝ խելքս է գնում, խելքին եմ նայում՝ զահլես է գնում:
- Բրդողը գիտե, խթողն ի՞նչ գիտե:
- Գայլի գլխին ավետարան կարդացին,- շուտ արեք,- ասաց,- ոչխարը գնաց:
- Գայլի հետ գառ է ուտում, տիրոջ հետ սուգ է անում:
- Գայլից վախեցողը ոչխար չի պահի:
- Գայլն ընկավ ոչխարի մեջը, վա՛յ մեկի տիրոջը:
- Գառին ասացին՝ գայլ որ տեսնես թքի երեսին. ասաց՝ ո՛չ տեսնեմ, ո՛չ թքեմ:
- Գդալով կերակրում է, պոչով աչքն է հանում:
- Գժի համար ամեն օր հարսանիք է:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Թմբուկի ձայնը հաճելի է լսել հեռվից:
- Ինչ Ալի-խոջա, ինչ Խոջա-Ալի:
- Ի՛նչ կարող է անել խաղճ մոծակն այնտեղ, ուր արծիվը փետուրներն է կորցնում:
- Ինչ որ պղնձիդ մեջ կա, շերեփդ կգա:
- Ինչ որ փչանալու է՝ աղում են, իսկ երբ աղը փչանա, ի՞նչ անեն:
- Ինչպես նվազն է, այնպես էլ պարն է:
- Ինչքան ուժեղ լինես, քեզինք ուժեղներ շատ կան:
- Իր մորը սիրողը ուրիշի մորը չի վիրավորի:
- Լավ ձին էլ է երբեմն սայթաքում:
- Լավի հետ լինես լավ կլինես:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

Ի՛նչ ԳՆԱԹԱՎԱՅՐ ԿԱ...

Ալավերդում ի՞նչ հանքավայր կա եւ ինչ է տալիս երկրին, - հարցնում է ուսուցչուհին:

- Վարդանիկը լռում է: Աշակերտներից մեկը հուշում է:
- Պը-ղըն-ձի...
- Ալավերդին երկրին տալիս է ձի, - պատասխանում է Վարդանիկը:

ԼՈՆԴՈՆԸ ՉԻ ԵՐԵՎԱ

- Վարդանիկ, Լուսի՛նն է մոտիկ, թե Լոնդոնը,- հարցնում է ընկեր Մարգոն:
- Լուսինը:
- Ինչո՞ւ:
- Ըստեղից Լոնդոնը չի երեւա, հմը Լուսինը կերեւա:

ՀՐՈՂ ԹԱՅՆ ԵՄ

- Մի օր Վարդանիկը կատակով դիմեց հորը:
- Ընկեր ջան արի էրթանք կինո:
- Ես թեգի ի՞նչ ընկեր, հորդ թայն եմ,- վրդովվեց նա:

ՆՍՏԵՔ, ԸՆԿԵՐ ՄԱՐԳՈ

- Երեխաներ, ավտոբուսում, տրամվայում, տրոլեյբուսում, հասարակական այլ վայրերում փոքրիկները պետք է իրենց տեղերը զիջեն մեծերին,- սովորեցրեց ընկեր Մարգոն: Մի օր էլ

Մարգոն բարձրացավ ավտոբուս: Նստելու տեղ չկար: Վարդանիկը իջավ հոր գրկից եւ դիմեց նրան.

- Նստեք, ընկեր Մարգո:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

- Վարդանիկ, եթե երկրագունդը իր առանցքից պոկվի, ո՞ւր կընկնի,- հարցնում է ուսուցչուհին:
- Արփաչայր, էլ ո՞ւր...

2- Արդյոք գիտե՞ք

Բանջարեղենից բոլոր կերպակրատեսակներին լավ է ավելացնել թարմ կանաչ սամիթ, մաղադանոս եւ սոխ: Այդ կանաչները մանր կտրտված լցնել սուպի, գարնիրի կամ տապակի մեջ:

Որպեսզի կլեպով եփած գետնախնձորը հեշտ մաքրվի, պետք է անմիջապես եփելուց հետո նրա վրա լցնել սառը ջուր:

Գետնախնձորի կոտլետները փարթամ, եթե նրանց մեջ լցնեք մի քիչ սոդա:

3. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1-Եկավ երկար ոտքերով, Գոռգռալով, երգելով, Թե ուր գնաց, գուշակեք Թողած կանաչ ոտքերով:
- 2-Ձիգզագաձեւ մի չվան, Սկիզբն՝ այստեղ, պոչը՝ Վան:
- 3-Պարաբաղում շողաց թուրը, Երեւանում խաղաց հուրը:
- 4-Անձրեւը՝ հայր, Արեւը՝ մայր, Երկինքը՝ անձայր գբոսավայր:
- 5-Գեղեցկուհին ոսկեծամ Զայտնվեց կապույտ հայելում, Եվ բոլորը արթնացան Երկրի բոլոր ծայրերում:

Պատասխան. 1-Անձրեւ, ամպրոպ, 2-Կայծակ 3- Կայծակ 4- Ծիածան 5- Լուսաբաց

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՍՄԵՐ

Ճարպոտ գլխամաշկի դեպքում գլխաթեփը մաքրել հետեւյալ կերպ. 10 մաս սպիրտի լուծույթին խառնել 1 մաս գերչակի յուղ: Չոր գլխամաշկի համար սպիրտի լուծույթն ու գերչակի յուղը միախառնել համաչափ:

Թափվող մազերի ընդացքը դադարացնելու համար խորհուրդ է տրվում գլուխը վճանալուց հետո եղինջի լուծույթով ներմերսել գլխամաշկը: 1 ճաշի գդալ եղինջի չոր, մանրացրած տրեւեները լցնել 1 բաժակ եռացող ջրում, որից հետո թրմել 1 ժամ: Ստացված եփուկը քամել եւ շաբաթը 1-2 անգամ քսել գլխին:

Ճարպոտ գլխամաշկի քորն ու թեփը վերացնելու համար խորհուրդ է տրվում պատրաստել հետեւյալ դեղամիջոցը. 10 գրամ կեչու խեժը, 20 գրամ գերչակի յուղը, 100 գրամ սպիրտը խառնել իրար եւ մազերը վճանալուց մի քանի ժամ առաջ քսել գլխին:

Պատրաստել կոթուկի եւ խնկեղեզի մանրացված արմատների հավասարաչափ խառնուրդ եւ 6 ճաշի գդալ այդ խարնորդից լցնել ջրի մեջ ու եռացնել 15-20 րոպե: Այնուհետեւ տաք տեղում թրմելուց եւ սառեցնելուց հետո ստացված լուծույթով շաբաթը 2-3 անգամ սրբել գլխամաշկը: Այս բուժգործողությունը առողջացնում է լավ ամրացնում է մազարմատները:

Դեմքի մաշկը փափուկ եւ թարմ պահելու համար վարունգը մանր կտրատել, լցնել 2շի մեջ, վրան ավելացնել օղի կամ նոսրացած սպիրտ եւ 2 շաբաթ դնել արեւի տակ: Դրանից հետո քամել եւ տրված լուծույթով մերսել դեմքի մաշկը: